ՏԵՍԱՆՅՈՒԹ. ԱՐԱ ՁՈՀՐԱԲՅԱՆԸ՝ ՀՈՐՍ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԻՐ ԲԱՆԱՁԵՎԻ ՄԱՍԻՆ.ARMLUR.AM

10.06.2019 10:21

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Ձոհրաբյանի օրը սկսվում է չորս զավակներից երկուսին դպրոց ճանապարհելով, փոքր որդուն մանկապարտեզ ուղեկցելով, դստերը կնոջ հետ զբոսանքի տանելով: Այսպիսով ArmLur.am լրատվական կայքի «Քայլ առ քայլ» հաղորդաշարն այս անգամ սկսեցինք առավոտյան զբոսանքից:Ձոհրաբյան ընտանիքին հանդիպեցինք իրենց համար արդեն սիրելի դարձած այգում, որտեղ Արա Ձոհրաբյանն իր տիկնոջ՝ Նունեի, փոքր որդու Միքայելի եւ դստեր Սոֆիի հետ զբոսանքի էր դուրս եկել: Լինելով շատ խիստ հայր՝ Արա Ձոհրաբյանը բացահայտեց նաեւ, որ դրան զուգահեռ անձամբ ինքն է երկու որդիների համար նախաճաշ պատրաստում, տանը լինելու ժամանակ էլ իր ձեռքով շատ համեղ ուտեստներ պատրաստում՝ աղցաններ, ձկնամթերքով ճաշատեսակներ եւ այլն: Ձոհրաբյանը նաեւ ընտանիքում մի ավանդույթ է ձեւավորել՝ ամեն կիրակի ընտանիքի անդամները եկեղեցի են գնում՝ պատարագի մասնակցելու: Երեխաները երբեք չեն խախտում իրենց համար արդեն սովորույթ դարձած ընտանեկան, ինչպես իրենք են ասում, ադաթը: Ի դեպ, մեր զրուցակիցը պատմեց, որ մի մրցույթի ժամանակ իր որդին կայացրել է իր համար մի դատավճիռ, որի մասին մանրամասն կներկայացնենք տեսանյութում: Օրվա ավարտին Արա Ձոհրաբյանի հետ ներկա գտնվեցինք Փաստաբանների պալատում Փաստաբանների միության նախկին նախագահ Միշա Փիլիպոսյանի 80 ամյա հոբելյանին:

Մանրամասները՝ տեսանյութում

Սոնա Գրիգորյան, Հովսեփ Հովսեփյան, Էդգար Համբարձումյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })